

ՅԵԿԱՆ ԽԱԶՅԱՆ

ԱՐԴՐՅԱՆ



891.995

Խ- 28

ՊԵՏՎՐԱԾ

2011-05

99-1 9975

ԹԵՎԱՆ ԻԱԶՅԱՆ

Խ-28


ԽՄ

# ԱՐՈՐՅԱՆ

Նկարներ՝ ՀՈՎՀ. ՇԱՎԱՐԺԻ

ԹԵՏՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1938



Ճանապարհի յեզերքին,  
Գիրքն ու գրիչը ձեռքին,  
Լուսյան, կանգնած ժպտաղեմ,  
Սպասում եր Եղիկին:

Յերբ Եղիկը մոտեցավ,  
Լուսյան ասաց բարկացած.  
— Ի՞նչու այսոր ուշացար,  
Մեր խոստումը մոռացար:

Նըանք ուրախ, զրուցով  
կատակներով, հանաքով  
Դպրոց եցին շտապում,  
Կյանքի լույսը սրտերում:

Յերբ դասատուն ժպտաղեմ,  
Հայացքով ջինջ ու վսեմ,  
Դաս հարցընց բոլորին,  
Լուսյան թռավ իր տեղից.

— Կարգամ, ընկեր Մինասյան,  
Յերեկ յեսու ու Մարտուսյան  
Պարապեցինք միասին,  
Յեվ ողնեցինք Մինասին:

ОВАЛНАЯ КРАСНАЯ ПЕЧАТЬ  
ЦЕНТРАЛЬНОЙ БИБЛИОТЕКИ  
СССР, ГУССР, МОСКОВСКОГО  
ГУБУД-ССР  
28.12.1952  
Н. А. Некрасов  
Библиотека

1097  
39

Զանգից հետո խմբերով,  
Ուրախ ու ժիր յերգերով,  
Նրանք խաղում են բակում,  
Հըճվում են ու կատակում:

Մերթ ձնե մարդ են շինում,  
Շուրջը խնդում ու խաղում,  
Մերթ թիթեռներ սպիտակ,  
Մերթ ավտոբուս, սավառնակ:

Կյանքով ուրախ ու խոհուն,  
Ծաղիկների պես սիրուն,  
Նրանք ապրում են այսպես  
Ուրախ, անհոգ թռչնի պես:

Մի մեծ սրահ լուսավոր  
Ընթերցարանն ե նրանց,  
Այնտեղ նրանք ամեն որ  
Ընթերցում են լուռ, սրտանց:

Նրանք ուրախ ու կայտառ,  
Հոգով զվարթ ու արի,  
Խոհերով հուր, բոցավառ  
Պատրաստվում են պայքարի:

## II

Գյուղը կանաչ արտերի,  
Պարտեզների արանքում,  
Ինչպես չքնաղ մի փերի  
Իր վարսերն ե հավաքում:

Շուրջը կանաչ արտի ծով,  
Վրան հուրը արեվի,  
Արծաթաձայն զնդոցով  
Ջուրն ե վազում Զանգույն:



Արտը ծփում ե բերքից,  
Բամբակն անուշ ծիծաղում,  
Նրա կանաչ յեզերքից  
Հավքերի յերգն ե լսփում։

Այսոր որն ե լուսավառ,  
Դպրոցական հանգստի,  
Աշակերտները կայտառ  
Դաշտն են գնում բամբակի։

Լայն դաշտերով բամբակի,  
Ճամբաներով թափշապատ  
Ինչպես յերթը բանակի  
Նրանք անցնում են հպարտ։

Յերբ զեփյուռը հողմաթե  
Խփեց նրանց ճակատիս,  
Նրանք առույգ ու թեթեվ  
Բարեփեղին արտերին։

Չոկը անցավ զբոհի,  
Ողակ-ողակ առանձին,  
Ու շուրջպարում արտերի  
Հնչեց յերգը լուսածին։

Մարզոն կամաց յերգելով,  
Լեվուշի հետ միասին,  
Բարդաները լցնելով  
Զայն են տալիս Մինասին։

— Մինաս, արի քիչ ոգնիր,  
Մի կողով ել հետդ բեր,  
Լեվուշ, զու յել պինդ սեղմիր,  
Այսոր քիչ են բարդաներ։

Համոն քրտնած ու շիկնած  
Չուր ե բերում աղբյուրից,  
Փարչը թեր տակն առած  
Լցնում գույլը փրփրալից։

Աշխատանքը յեռում ե.  
Ամեն ողակ առանձին  
Աշխատում ե, վոր իրեն  
Հանձնած գործը վերջացնի։

Յեկ յերբ հնչեց փողը զիւ,  
Ողակներով շարվեցին,  
Որեվակեղ, թեվաբաց  
Նրանք ուրախ քայլեցին։

Յեկ հրճիվելով հույզերից,  
Հաղթանակի յերգերով,  
Նրանք անցնում են նորից  
Կոլխոզական արտերով։

### III

Ահա նրանք Ամենքը,  
Բաժան-բաժան իրարից,  
Նկարում են յերեքը  
Խնդադեմ ու սիրավց։

Ճերմակ թղթին կոացած,  
Լուսյան վրձինը ճեռքին,  
Դեմքը խոհուն, լոջացած  
Նկարում ե լենինին։

Հեղոն թերթ ե նկարում,  
Վանյան նկարը ճեռքին  
Ռկումբն ե զարդարում  
Ծիծաղի հուրն յերեսին։



Պլակատ ե գրում նա,  
Վովան՝ խելոք պատանին,  
Աչքի տակով միշտ նայում  
Պատից կախված կենինին:

Վաղոն, Սիշան ու Վերգոն  
Թղթից ծաղիկ են շինել,  
Պիոներական ակումբի  
Վողջ պատերը զարդարել:

Մի անկյունում Արծվեկը  
Յերգի փորձ ե կատարում,  
Չարաճճի Շողիկը  
Նայում ե ու ծիծաղում:

Սաքոն մատիտը ձեռքին  
Վոտանավոր ե գրում,  
Նրա պայծառ խոհերին  
Կյանքի արեվն ե շողում:

Այսպես ուրախ ու պայծառ,  
Լուսածիծաղ ու կայտառ,  
Նրանք փորձ են կատարում  
Պիոներական ակումբում:

Յերեկոյան պիտի գան,  
Իրենց շնորհը ցույց տան,  
Յերեկոյթում բազմամարդ,  
Ծնողներին հարազատ:

Յերեկոյան յերբ իջագ  
Մթնշաղը կապտագույն,  
Լուսնի մահիկը յելագ  
Հորիզոնից վոսկեգույն:

Շողաց ակումբը լույսու  
Հազար գույնի ու ձեվի,  
Լսվեց ազմուկը բեմի  
Յեվ զիլ ձայնը Արծվի:

Դանգուր մազերի տակից  
Նա լուրջ նայեց դահլիճին,  
Հուզաբորբոք, խնդալից  
Այսպես ասաց բոլորին:

— Մեր սիրելի ծնողներ,  
Շատ սիրելի հայրը մեր,  
Արեվի պես մշտավառ  
Մեզ պահում ե միշտ պայծառ:

Նրան յերկար կյանք ու սեր  
Ու կրակոտ սիրտը մեր,  
Գարուն, ամառ ու արև  
Յեվ մեղանից ջերմ բարեւ:

Նրա սիրով համակված,  
Արեվակեղ, կրծքաբաց,  
Մենք ել ձեզ հետ միասին  
Ոգնում ենք մեր կոլխոզին:

Թե գասերում, թե խաղում,  
Թե բամբակի արտերում,  
Մենք դիմում ենք գրոհի,  
Վոնց հերոսը մեր դարի:

Սովորում ենք, ամրանում  
Մեր լուսաշող աշխարհում,  
Արցունք, թախիծ, հոգս ու վիշտ  
Մեզնից հեռու յեն ընդմիշտ:

Այսպես ե դարը մեր վառ,  
Լուսածիծաղ ու պայծառ,  
Մեզ վայփայում, գուրզուրում  
Վոնց մեր հայրն ե պահանջում:

Թող միշտ ապրի Ստալինը,  
Նրան յերկար կյանք ու սեր,  
Վոր մենք նրա խնամքով  
Ապրենք ուրախ ու սիրով:

Վարագույրը բարձրացավ,  
Զոկը հանգիստ շարվեցավ,  
Ողակներով առանձին  
Դուրս յեկան ճոխ հանդեսին:

Հնչեց յերգը լուսածին,  
Առաջնորդի անունին,  
Թմբուկները հաղթական  
Վորոտացին բարձրաձայն:

Յերգն ու պարը առանձին,  
Յերկար, յերկար թնդացին  
Յեվ հանդեսը սիրով լի,  
Անցավ զվարթ, բերկրալի:

Ծնողները խնդացին,  
Զավակներին թանկագին,  
Խոր ու ուշիմ նայեցին  
Ու գոհացած գնացիս:

Այս ե նրանց առորյան  
Մեր որերում հուրհրան:

Խմբագիր՝ Հ. Հայրապետյան  
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան

Դրավակի լիտոգր. Ա. 4016. Հրատ. № 4653.

Պատվեր 602. Տիրաժ 4000.

Թուղթ 62×94 Տպագր. 3/4 մամ, Մեկ. մամուլ 24480 նիշ.

Հանձնված և արտադրության 26 մայիսի 1938 թ.

Ստորագրված և տպագրության 25 հունիսի 1938 թ.

Պետհատի 1 տպարան Յեղեց, Լենինի փող. 65.



NL0396235

9619

ԳՐԱԾ 60 Կ.

Տ. ԽԱՅՅԱ  
НАШИ БУДНИ  
ГИЗ АРМ. ССР ЕРЕВАН